Ծավ

Բնակչություն՝ 319

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 37 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1080 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Ծավը գտնվում է Մեղրու լեռնաշղթայի լանջին Ծավ գետի անտառապատ, գեղադիր ափին: Ունի մեղմ կլիմա, հիանալի ամառանոցավայր է:
Գյուղը պատմական աղբյուրներում հիշատակվում է 18-րդ դարի կեսից, նշված է Ղուկաս Սեբաստացու «Ընտիր պատմություն Դավիթ Բեկի» աշխատության մեջ:
Հիշատակվում է նաև Թազաշեն անվամբ:
Գյուղում կա եկեղեցի, իսկ շրջակայքում՝ եկեղեցի, գերեզմանոց, գյուղատեղիներ (Մթնաձոր, Սանալու, Նավս, Կեմանց, Դալլաքլու, Չինարլու, Թնջումնաց), Կըզկալա և Ղազաղռան կոչված բերդերի ավերակները:
Ծավից 6-7 կմ հարավ-արևելք գտնվում է Ա.Բակունցի նկարագրած Մթնաձոր անտառը, իսկ 2 կմ հեռավորության վրա՝ Սոսու Պուրակ արգելավայրը:
Ծավում 1929թ. կազմավորվել է կոլտնտեսություն, որը լուծարվել է 1990թ.:
Ծավում են ծնվել ՍՍՀՄ հերոս Հունան Ավետիսյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գրող Գևորգ Հայրյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 12837 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6988 հա, որից՝
- վարելահող՝ 114 հա, խոտհարք՝ 236 հա, արոտ՝ 5407 հա, այլ հողատեսք՝1232 հա
-բնակավայրերի հողեր՝ 62 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 5 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝4 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3634 հա,

-անտառային հողեր՝ 2113 հա, որից անտառածածկ՝ 1943 հա
- ջրային հողեր՝ 30 հա